«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 077484554,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

Երևանի քաղաքապետ
Հրաչյա Սարգսյանին

HETQ.am-ի լրագրող **Տիրայր Մուրադյանից**
(Էլ-փոստ tirayrmuradyan@gmail.com,
հեռ.՝ [redacted]

Հարգելի պարոն **Սարգսյան**,

Համաձայն 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

Երևան համայնքի մայթերին տարիներ շարունակ տեղադրվել և շարունակվում են տեղադրվել վճարային տերմինալներ, որոնք պատկանում են տարբեր ընկերությունների: Օրինակ՝ «Իզի Փեյ» ՍՊԸ, «Թել-Սել» ՓԲԸ, «Ֆասթ Շիֆթ» ՍՊԸ և այլն:

1. Ի՞նչ հիմքով են իրավաբանական անձանց պատկանող սարքավորումները տեղադրվում Երևան համայնքի մայթերին:
2. Արդյո՞ք տերմինալների տեղադրման վայրերի ընտրությունը և ընդհանրապես տերմինալների տեղադրումը համաձայնեցվում է Երևանի քաղաքապետարանի հետ:
3. Քանի որ մայթերը սեփականության իրավունքով հնարավոր չէ օտարել ֆիզիկական և իրավաբանական անձանց(Հողային օրենսգիրք, հոդված 60), ապա արդյո՞ք առկա են վարձակալության պայմանագրեր Երևան համայնքի հետ կնքված:
4. Եթե առկա են վարձակալության պայամնագրեր, ապա տրամադրեք դրանց պատճենները:
5. Եթե առկա չեն տերմինալները Երևան համայնքի մայթերին տեղադրելու մասին իրավական հիմքերը, ապա տրամադրեք դրա բացակայության մասին տեղեկատվություն(ինչպե՞ս է քաղաքապետարանի աշխատակազմը վերահսկել տերմինալների տեղադրման գործընթացը)

Խնդրում եմ յուրաքանչյուր հարցին պատասխանել առանձին:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Խնդրում եմ ծանուցումը ուղարկել **էլեկտրոնային** տարբերակով: (Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության

ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):

Հարգանքով՝ **Տիրայր Մուրադյան**

24 սեպտեմբերի 2022 թ.